բա համար. միայն գործն է, որ արժէք ունի: Նա վերաբերւում է մարդուն ըստ իր գործի, առանց ի նկատի ունենալու, թէ ո՞վ է այդ գործի հեղինակը — երկրի առաջին պաշտօնեա՞ն, թէ՞ վերջին խոզարածը: Նոյն պայմաններում կատարուած նոյն գործի համար ամէնքը հաւասարապէս նոյն վերաբերմունքն են ստանում օրէնքից — թէ՛ վարձատրութիւն, թէ՛ պատիժ:

Այս երեք հիմքերից էլ բղխում է օրէնքի անսահման հեղինակութիւնը եւ փրկարար ոյժը Շահամիրեանի համար: Աստծուց յետոյ օրէնք: «Օրէնք մեր եղիցին տէր եւ թագաւոր մեր. բայց յօրինաց մերոց այլ ոչ ոք ծանիցուք դերիվեր, բայց Արարիչ Աստուած միայն» (89):

Այժմ տեսնենք, թէ օրէնքը կարո՞ղ է երջանկացնել մարդուն եւ ի՞նչպէս:

Հեղինակի կարծիքով, շատ բան հարկաւոր չի՝ մարդուն երջանիկ անելու համար: Հարկաւոր է միայն երեք պայման — առաջին՝ որ մարդն ազատ լինի իր նմաններից, այսինքն՝ ուրիշ մարդկանց չարագործութիւններից. երկրորդ՝ որ նրա բնական իրաւունքները պաշտպանուած լինին, եւ երրորդ՝ որ նա ապահովուած լինի կառավարական պաշտօնեաների եւ ընդհանրապէս պետութեան դէմ: Եթէ իրականութեան մէջ գոյութիւն ունեն այդ պայմանները, այնուհետեւ այլեւս որեւէ արտաքին պատճառ չի կարող մարդուն արդելք լինել, որ նա իր բոլոր կարողութիւններով երջանկութեան ձգտի եւ կամ մի անգամ արդէն ձեռք բերած երջանկութիւնը ապահովաբար պահպանի:

Եւ Շահամիրեանի օրէնքը այդ երաշխիքները տալիս է մարդուն:

Վերեւում արդէն դիտել տուինք, որ հեղինակի կարծիքով մարդկային դժբախտութիւնների ամենամեծ մասն առաջանում է իր՝ մարդու փոփոխական բնութիւնից: Օրինակ, նրա խաղաղ հոգին մէկ էլ տեսաք փոթորկի նման բռնկեց, դրանով պատճառ դառնալով մի չարք դժբախտութիւնների՝ իր եւ ուրիշների համար: Կամ՝ միշտ դժգոհ իր ներկայ վիճակից եւ ունեցածից, նա չարունակ ձգտում է առաւել երջանկութեան եւ աւելին ձեռք բերելու, յաճախ կանգ չառնելով միջոցների առաջ: Հետեւանքը լինում է այն, որ նորից ծնւում են բազմաթիւ չարիքներ ու դժբախտութիւններ՝ իր եւ ուրիշների համար: Կամ՝ «ակն ընդ ական»ի սկզբունքով ղեկավարուելով կեանքում, ստեղծում է նորանոր չարիքներ ու դժբախտութիւններ՝ իր եւ ուրիշների համար:

Այսպէս կարելի էր երկար չարունակել փաստերի այդ շարանը, որոնք ցոյց են տալիս, որ մարդը ինքն է չարիքների ու դժբախտութիւնների մեծագոյն աղբիւրը՝ իր եւ ուրիշների համար: Իսկ դժբախտութիւնը եւ չարիքը երջանկութեան հակառակ գաղափարներ են:

Հետեւապէս — ըստ Շահամիրեանի — անհրաժեշտ է մի միջոց, անհրաժեշտ է շղթայի նման մի բան, որը մարդու ձեռքը յետ պահէր չարագործութիւն ու դժբախտութիւն անելուց՝ իր եւ ուրիշների համար, որով եւ նպաստած կը լինէր մարդու երջանկութեանը: Եթէ չլինի այդ շղթան, «այսօր ես կը փշրեմ իմ հարեւանի տամը, վաղը դու կը փորես քո եղբօր աչքը, երրորդը կը յափշտակի իր դրացու ունեցուածքը. այդպիսով երկիրը կը լեցուի անօրէնութեան գարշահոտութեամբ, ժողովուրդը կը թարշամի, ազատութիւնը կը խոնարհուի եւ անպատիւ այլազգիները կ'ելնեն մեզ վրայ» (73):

Այդ դեղեցիկ շղթան օրէնքն է, որ չարագործին պատժելով, նրան (եւ ուրիշներին) հարկադրում է այլեւս չար չգործել. «Եթէ չլինի օրէնքի երկիւղը, մարդը չի կարող իր զգայարանները զսպել եւ մեղքից հրաժարուել» (104):

Մարդկային երջանկութեան համար դեռ եւս բաւական չէ, որ չարիքներ ու դժբախտութիւններ չգործուեն: Դրա հետ միասին նաեւ անհրաժեշտ է, որ բարեգործութիւնը խրախուսուի եւ շատանայ:

Եւ Շահամիրեանի օրէնքը այդ հնարաւորութիւնն էլ տալիս է մեզ. բարի գործողին պատիւ եւ յարգանք մատուցանելով, այդպիսով օրէնքը խրախուսում եւ առաջ է քաշում բարեգործութիւնը եւ բարի գործողներին, որովհետեւ «եթէ բարի գործողը չտեսնի իր գործի արդիւնքը, այլ եւս բարի չի գործի» (103):

Այսպէս ուրեմն, հեղինակի կարծիքով, օրէնքը մարդկային երջանկութեան ամենախոշոր մասն ապահովում է նրանով, որ չար գործերն ու դժբախտութիւնները խափանում է,